



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նորին Ամենապատութիւն
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանին
Պատրիարքին Երուսաղէմի Հայոց
Երուսաղէմ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ»

Ամենապատիւ Եղբայր Մեր,

Մեզի համար մեծ ուրախութիւն է մեր Փրկչի Քրիստոսի հրաշալի Յարութեան աւետիսով՝ Զերդ Սրբազնութեան և ձեր Սուրբ Աքոռին քերելու Մեր Եղբայրական սիրոյ ողջոյնը և ձեր ուխտապահ միաբանութեան ու հաւատացեալ ժողովուրդին՝ մեր ամենաբարի մաղթանեներն ու հայրական օրինութիւնը:

Սուրբ յարութեան լոյսով անգամ մը ևս քող ամրապնդուի քրիստոնեական մեր յոյսը թէ երկնային ողորմութեամբ պիտի քագաւորէ վերջապէս խաղաղութիւնը մարդկային աշխարհի վրայ և պիտի բացուի նանապարհը հոգիներու փրկութեան:

«Զի Աստուած որ ասաց ի խաւարէ լոյս ծագել. որ և ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի» (Բ Կոբնթ. Դ 6):

Փառք յարուցեալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս.

Վ Ա Զ Գ Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. էջմիածին,

Սուրբ Զատիկ, 1975 թ.